
**ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱԹՈՅԱՆ Վ. Կ.

Շուկայական տնտեսության անցումն անխզելիորեն կապված է ժողովրդատնտեսական համալիրի կառուցվածքային վերակառուցմանը: Իրենց հերթին, կառուցվածքային վերակառուցումները ենթադրում են խոշոր ներդրումներ՝ արտադրական ապարատի ձևավորման, նոր արտադրատեսակների ու արտադրական ծառայությունների և աշխատատեղերի ստեղծման, անշարժ գույքի նկատմամբ բնակչության պահանջմունքի բավարարման համար և այլն: Այսպիսով, ներդրումային բնագավառում զարգացումներն ու փոփոխությունները միաժամանակ և հետևանք են, և ազգային տնտեսության կառուցվածքի վերակազմավորման պայման, այն է՝ շուկայական մեխանիզմի հիման վրա կատարվող գործողություններ:

Շուկայական տնտեսության պայմաններում ներդրումային բնագավառի գործունեության ծավալն ու բնույթը որոշող վճռորոշ գործոնը կոնյունկտուրան է: Բայց եթե առանձին ապրանքներ իրացնող կազմակերպության համար շուկայի առանձին հատվածի իրավիճակի կարճաժամկետ գնահատականը բավարար է, ապա երկարատև գործողության օբյեկտներում կապիտալ ներդրումների և առանձին ճյուղերում գործունեության կողմնորոշման նպատակահարմարության որոշման համար (այդ թվում շինարարության և շինանյութերի արդյունաբերության) անհրաժեշտ է ազգային տնտեսության իրավիճակի մակրո-տնտեսական գնահատական, ձևավորվող միտումների և շարժի բացահայտում: Այդ բոլորը պայմանավորում են ներդրումային ոլորտի առաջնահերթությունը ուսումնասիրելու հեռանկարները՝ որպես հիմք և գնահատման չափանիշ ընդունելով կոնկրետ ներդրումային նախագծերի և դրանց իրացման նպատակահարմարությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության շուկայական ուղղվածությունն արմատապես փոխել է ներդրումների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Չնայած կենտրոնացված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը, 1982 թ. սկսած, տարեցտարի իջել է, այնուամենայնիվ, դրա բաժինը մինչև 1990-ական թվականների սկիզբը մնացել է 1982 թ. 95 %-ի մակարդակին: Այսինքն, ձեռնարկությունների կապիտալ ներդրումների գլխավոր աղբյուրը եղել են կենտրոնացված միջոցները: Ձեռնարկությունների տրամադրության տակ թողնվող միջոցների հետ համատեղ հանրագումար մեծությունը կազմել է ամբողջ ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումների 97 %-ը, մնացածը բաժին է ընկել բնակչության կատարած կապիտալ ծախսերին (այդ թվում՝ պետական

վարկերի հաշվին), որոնք ուղղվել են սեփական բնակարանային շինարարությանը¹:

Ներդրումային բնագավառի դժվարությունները 1990-ական թվականների սկզբի սխալ տնտեսական քաղաքականության արդյունքն են: Արտադրության միջոցների սխալ ու անկանոն մասնավորեցումը եղավ երկրի տնտեսության կործանարար փլուզման գլխավոր գործոնը և հետագայում ներդրումային դաշտի խոպանացման հիմնական պատճառը: Հետխորհրդային առաջին հնգամյակում նման մասնավորեցումը տնտեսապես կործանարար եղավ երկրի ամբողջ տնտեսական համակարգի և արտադրության առաջատար ճյուղերի համար: Սեփականաշնորհման սերտիֆիկատների բաշխման առաջին շրջանում առանձին անհատների բաժին հասավ ոչ միայն ազատ վաճառքի դրված բաժնետոմսերի 80%-ը, այլև դրանց օրեցօր արժեզրկվող այն 20%-ի զգալի մասը, որն անվճար տրվել էր ձեռնարկությունների աշխատողներին: Դրա հետևանքով նման եղանակով ի հայտ եկած նորաթուխ սեփականատերերի մի ամբողջ շերտի ձևավորումն ի չիք դարձրեց գործերի կառավարմանն ու որոշումների կայացմանը աշխատավորի մասնակցությունը: Դրանով պայմանավորված՝ որոշակի անջրպետ ստեղծվեց նաև նյութական բարիքների արտադրության մեջ կենսականորեն շահագրգռված սոցիալական շերտերի, պետության կողմից մշակվող ու իրականացվող տնտեսական քաղաքականության և դրա իրականացմանն անհրաժեշտ նախապայմանների՝ ապապետականացված արտադրական կարողությունների միջև:

Տեխնիկապես բարձր հագեցած ֆաբրիկաներն ու գործարաններն իրենց իրական արժեքից 150-200 անգամ պակաս գներով վաճառվեցին անհատ ձեռներեցներին: Քանի որ նորաթուխ գործարանատերերի առջև պայման ու պահանջ չդրվեց շարունակելու պրոֆիլային ապրանքի արտադրությունը, նրանք էլ այդ ձեռնարկությունները կամ վերավաճառեցին կամ էլ դրանց սարքավորումները, որպես մետաղի ջարդոն, վաճառեցին դստում: Դա հասկանալի է թվում, քանի որ «տնտեսավարման» այդ եղանակն ազատորեն ավելի մեծ անձնական եկամուտ էր բերում տիրոջը, քան արտադրության կազմակերպումը: Դրա շնորհիվ հանրապետության արտադրական կարողությունները կարճ ժամանակում փոշիացվեցին: Եվ պատահական չէ, որ 1998 թ. հանրապետությունում գործում էր գրանցված արդյունաբերական ձեռնարկությունների ընդամենը 7 %-ը: Ընդ որում, դրանք աշխատում էին իրենց արտադրական կարողությունների 30 %-ի չափով²: Համաձայն պաշտոնական տվյալների, 800.000 ԱՄՆ դոլարով «սեփականաշնորհվեց» Հայաստանի տնտեսական կարողության 55 %-ը: Այսինքն, հանրապետության ազգային հարստության մեծ մասը մի խումբ անձանց ձեռքով

¹ *Строительство в Республике Армения, Е., 2001, с.*

² **Մանասերյան Թաթուլ**, Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր (ազգային տնտեսության զարգացման հիմնական առաջնահերթությունները), Ե., 2000, էջ 15:

հավասարեցվեց նույնիսկ ոչ թե մեծահարուստ, այլ ընդամենը միջինից քիչ բարձր կենսամակարդակ ունեցող ամերիկացու անձնական ունեցվածքի արժեքին³:

Տնտեսավարման շուկայական մեթոդների անցման և պետության կարգավորիչ դերի փոփոխության պայմաններում մասնավոր ներդրումների բաժինը մշտապես աճում է: Այդ են վկայում աղյուսակ 1-ի տվյալները:

Աղյուսակ 1

Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի

Հանրապետությունում⁴

(%-ով կապիտալ ներդրումների ընդհանուր գումարին)

Տարեթվեր	1994	1995	2000
Ընդամենը	100	100	100
Պետական բյուջե	39	19	8
Սեփականաշնորհման միջոցներից	-	-	10
Վերակառուցման և զարգացման Եվրոբանկի վարկը	8	10	1
Համաշխարհային բանկի վարկը	6	25	7
Հումանիտար օգնության և վերակառուցման միջոցները	2	4	8
Արտերկրի ներդրողների միջոցներ	-	-	8
Կազմակերպությունների միջոցներ	9	6	40
Բնակչության միջոցներ	35	33	18
Այլ միջոցներ	1	1	-

Ներդրումների ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր կառուցվածքում բնակչության միջոցների մեծ տեսակարար կշռի և կազմակերպությունների ներդրումների աննախադեպ աճի միտումները կապահպանվեն առաջիկայում, չնայած իրական աշխատավարձի իջեցմանը, որքանով բնակչության համընդհանուր եկամուտները մեծանում են ի հաշիվ ձեռնարկատիրական գործունեության և սեփականության նկատմամբ եկամուտների առաջանցիկ աճի: Ինչ վերաբերում է բյուջեից ֆինանսավորվող ներդրումներին, ապա, ինչպես տեսնում ենք, այն նշանակալի կրճատվել է՝ 2000 թ. կազմելով ընդամենը՝ 8 %:

Շուկայական տնտեսության պայմաններում, որպես կանոն, մասնավոր ներդրումներն ուղղվում են տնտեսության այն ճյուղերը, որոնցում սպասելի է

³ ՀՀ տնտեսության և ձեռնարկատիրության զարգացման արդի խնդիրները: Ազգային գիտաժողովի նյութեր, Ե., 1998, էջ 26:

⁴ Աղյուսակը կազմված է «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» 1921-2000, վիճակագրական ժողովածուի (Ե., 2001) 39-40 էջերի տվյալների հիման վրա:

շահութաբերության բարձր մակարդակ: Պետական ներդրում կատարվում են հիմնականում տնտեսության քիչ եկամտաբեր ճյուղերում, որոնցում առկա է կապիտալի դանդաղ պտույտը և ինֆրակառուցվածքներում՝ բացառությամբ ռազմական նպատակների: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, եթե առաջներում գերակշռող էր ներդրումների բյուջետային ֆինանսավորումը, և պետության կողմից ֆինանսավորման ծավալները խստորեն վերահսկվում ու կարգավորվում էին, ապա այժմ կենտրոնացված ներդրումների աղբյուրները կազմում են ամբողջի մեկ յոթերորդ մասը, այդ թվում պետական բյուջեից՝ 4,5 %-ից քիչ ավելին: Կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը Հայաստանում 1994 թ. եղել է 24, 18, 1995 թ.՝ 38, 525, իսկ 2000 թ.՝ 100, 99 մլրդ դրամ⁵: Ընդ որում, դրանց ծավալն արտադրական բնագավառում 1994 թ.կազմել է 31, 1995 թ.՝ 40, 5, իսկ 2000 թ.՝ 56,2%⁶:

Աղյուսակ 2
Կապիտալ ներդրումների դինամիկան Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ 1994-2000 թթ.⁷
(մլն դրամ)

Տարեթվեր	Կապիտալ ներդրումներ	Այդ թվում	
		արտադրական	ոչ արտադրական
1994	24,180	7,513	16,667
1995	38,525	15,603	22,922
1996	52,179	33,311	18,868
1997	57,002	36,756	20,246
1998	75,850	34,383	41,467
1999	78,850	36,518	42,332
2000	100,990	56,721	44,269

Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների բնագավառի իրավիճակը բնութագրվում է խոր տնտեսական ճգնաժամին զուգընթաց բազում սոցիալական և ներքին ու արտաքին գործոններով: Ներդրումների բնագավառի իրավիճակի կենտրոնական հիմնահարց է արժեզրկումը (հատկապես ծախսերի): Արժեզրկման պատճառները

⁵ «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» 1921-2000, վիճակագրական ժողովածու, էջ 43:

⁶ Նույն տեղում:

⁷ Աղյուսակը կազմված է «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» 1921-2000, վիճակագրական ժողովածուի 43 էջի տվյալների հիման վրա:

տնտեսավարման նախկին կենտրոնացված համակարգը, դրա ժառանգորդ մենաշնորհը և տեխնիկական հետամնացությունն են: Գների անկանխատեսելի աճն ըստ էության, բացառում է ճգնաժամից դուրս գալու այնպիսի կարևորագույն նախապայմանների ստեղծման հնարա- վորությունը, ինչպիսին կապիտալի ուղղորդումն է տնտեսության իրական զարգացմանը:

1994-1997 թթ. հայկական նորահայտ դրամի արագ արժեզրկումն իր հերթին կործանարար ազդեցություն թողեց հանրապետության տնտեսության վրա և հիմնիվեր ցնցեց վերարտադրության ամբողջ համակարգը: Կենտրոնական բանկի տվյալներով, ԱՄՆ մեկ դոլարի փոխարժեքը դրամահատման առաջին տարում (1994 թ.) կազմեց 291, 1995 թ.՝ 405, 9, իսկ 1998 թ. փետրվարին՝ 500, 67 դրամ⁸:

Վիճակագրական ու թվական այն տվյալները, որոնցով միլիարդավոր դրամներով արտահայտվում են հանրապետության տնտեսության մեջ ներդրումների տարեկան ծավալները, իրականում կայուն տարադրամի փոխարժեքներով չնչին մեծություններ էին, որոնց ներարկումներով հանրապետության շնչահեղձ տնտեսությունը հազիվ փրկվում էր կործանման փուլին հանգեցնող վտանգավոր քայլից:

Այնուամենայնիվ, 2000-2001 թվականները Հայաստանի տնտեսության վերակենդանացման վճռորոշ տարիներ էին: Դրանց ընթացքում էապես դանդաղեց տնտեսական անկումը, արտադրության որոշ ճյուղեր աճի միտումներ ցուցաբերեցին, իսկ դրամի արժեզրկման բարձր տեմպը կասեցվեց: 1994-2002 թթ. ժամանակահատվածի համար գրանցվեց տնտեսական վերելքի ամենաբարձր ցուցանիշը՝ 6,7 % միջին տարեկան աճ: Եթե համախառն ներքին արդյունքը /ՀՆԱ/ 1997 թ. կազմեց 1. 638, 9 մլն դոլար, ապա 2000 թ. այդ մակարդակը գերազանցվեց 16, 6, իսկ 2001 թ.՝ 29, 2 %-ով, կազմելով 2. 117, 8 մլն. դոլար⁹: Հանրապետության ՀՆԱ մակարդակը 2002 թ. հասավ 1989 թ. մակարդակի 79, 2 %-ին¹⁰: Բացի այդ, 1999-2003 թթ. ավելի քան 3, 3 անգամ նվազեցին պետական պարտատոմսերի գծով կատարված տոկոսային ծախսերը՝ 52, 6%-ից իջնելով 15, 7 %-ի¹¹: Թեկուզ այս փաստը հաստատում է, որ Հայաստանում նվազում են ներդրումների ռիսկերը: Այսպիսով, 2000-2002 թթ. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումները բնութագրվում են բարձր ցուցանիշներով: Այդ տարիներին տնտեսական աճը կրկնակի գերազանցել է դրան նախորդող երեք տարիների մոտ 14 % ցուցանիշը: Միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 9, 5 %, որպիսին չի ունեցել անկախ Հայաստանը իր պատմության ընթացքում:

Հայաստանի տնտեսության որոշակի աշխուժացումն առաջին հերթին ձեռք է բերվել այնպիսի տնտեսական քայլերի շնորհիվ, ինչպիսիք են գնային փոփոխականների կայունացումը, մասնավոր հատվածի զարգացումը (հանրապետության աշխատող բնակչության մոտ 77 %-ը զբաղված է մասնավոր

⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, Ե., 2002, էջ 526:

⁹ Նույն տեղում, էջ 235:

¹⁰ «Հայաստան» ֆինանսներ և էկոնոմիկա (ամսագիր), 2003, N 7, էջ 2:

¹¹ Նույն տեղում:

հատվածում)¹² և տնտեսավարող սուբյեկտների համար հավասար պայմանների ապահովումը՝ մրցակցային ու ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմամբ հանդերձ:

Վերջին երեք տարիների տնտեսական աճի շնորհիվ մեծացավ նաև բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ծավալը: Դրա ցուցանիշը 2002 թ. եղել է 790, իսկ 2001 թ.՝ 700 ԱՄՆ դոլար¹³: Այդ ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը կարող է համեմատվել ԱՊՀ այնպիսի պետությունների հետ, ինչպիսիք են Վրաստանը, Ադրբեջանը, Ուզբեկստանը և այլն: Նկատի ունենալով, որ դոլարի գնողունակությունը տարբեր երկրներում այլ է, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշը հաշվարկվում է նաև ըստ գնողունակության համագործության սկզբունքի (ԳՀՄ): Այսպես, օրինակ, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանի Հանրապետությունում գնահատվում է 3800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Համաշխարհային բանկի համեմատական վերլուծությունների տվյալներով, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Ռուսաստանում կազմել է 1750 ԱՄՆ դոլար (ըստ ԳՀՄ-ի՝ 6880 դոլար), Թուրքիայում՝ 2350 ԱՄՆ դոլար (ըստ ԳՀՄ-ի՝ 5830 դոլար), Էստոնիայում՝ 3870 ԱՄՆ դոլար (ըստ ԳՀՄ-ի՝ 9650 դոլար), Ֆինլանդիայում՝ 23780 ԱՄՆ դոլար (ըստ ԳՀՄ-ի՝ 24030 դոլար)¹⁴:

Հանրապետությունում ՀՆԱ աճը պայմանավորված է տնտեսության հինգ հիմնական ճյուղերի (արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ, առևտուր) նշանակալի վերելքով: Տնտեսական աճի առավել բարձր տեմպ է արձանագրվել շինարարությունում՝ 44,6%¹⁵: Դրան մեծապես նպաստել է Հայաստանում Լինսի հիմնադրամի միջոցներով 30,5 մլրդ. դրամ արժողությամբ շինմոնտաժային աշխատանքների ծրագրի իրականացումը: Շինարարության աճն ու աշխուժացումն ուղղակիորեն պայմանավորում են շինանյութերի արդյունաբերության զարգացումն ու վերելքը: Այսօր վերելք են ապրում հանրապետության երբեմնի հզոր շինանյութերի արտադրության ձեռնարկություններն ու երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանները:

Հայաստանի վերջին տարիների տնտեսական աճը բնութագրող տվյալները վկայում են, որ հանրապետության տնտեսությունը թոթափել է տեղապտույտը և զարգանում ու աճում է: Այնուամենայնիվ, տնտեսության կայուն ու հետևողական աճի գլխավոր գրավականը եղել և մնում են ներդրումային բնագավառի մշտական ակտիվությունն ու ծավալների աճը:

Ներդրումների մշտական, չափավոր ու հիմնավորված աճը բազում գործոններ է պարունակում: Փորձագետների հաշվարկմամբ, հանրապետության տնտեսության վերականգնման համար մղվող պայքարի ներկա փուլում լավագույն ցուցանիշը տարեկան 200-250 ԱՄՆ դոլարի մեծությունն է:

¹² Հայաստանի Հանրապետության 2002 թ. պետական բյուջեի կատարման համառոտ ուղեցույց, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Ե., 2003, էջ 9:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Հայաստանի Հանրապետության 2002 թ. պետական բյուջեի կատարման համառոտ ուղեցույց, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, էջ 8:

¹⁵ Նույն տեղում:

Տնտեսության ինֆրակառուցվածքի, արտադրական, տեխնոլոգիական և այլ ռեսուրսների առկա պայմաններում հանրապետության տնտեսությունը չի կարող այդ գումարից ավելի տարեկան ներդրում կլանել: Տնտեսական կարողության հետագա աճը և հզորությունների մեծացումը տարեցտարի ավելի մեծ չափերի կապիտալ ներդրումների իրացում թույլ կտան հանրապետության տնտեսության տարբեր ոլորտներում:

Հաշվի առնելով հանրապետության ներքին ռեսուրսների նյութական սահմանափակվածությունը, առկա աշխարհաքաղաքական իրավիճակը, ինչպես նաև բազմաթիվ ենթակայական նախապայմաններ՝ Հայաստանի տնտեսության, հատկապես արդյունաբերության վերաձևավորման և զարգացման նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել պետության օժանդակող դերը արտասահմանյան ներդրումների համար գրավիչ ծրագրերի մշակման ու համադրման ուղղությամբ, ինչպես նաև վերանայել ներդրումների մաքսային, հարկային և այլ բնույթի բյուրոկրատական խոչընդոտները: Հարկ է առաջնահերթ աջակցություն ներդրումային այն ծրագրերին, որոնք կստեղծեն նոր աշխատատեղեր, կնպաստեն ներքին շուկայի պահանջների բավարարմանը և առավելագույնս կհամապատասխանեն ընտրված տնտեսական առաջնահերթություններին: Անհրաժեշտ է ներդրումային առավել կարևոր ծրագրերի գծով, ՀՀ կառավարության մակարդակով նախատեսել հարկային և մաքսային արտոնյալ կարգավիճակ՝ շահույթի ստացման առաջին տարում (գուցե նաև երկրորդ) շահույթի ու ավելացված արժեքի հարկերից և հումքի որոշ տեսակների ներկրման ժամանակ դրույքաչափը սահմանել 0-ից մինչև հարկային որևէ հաստատված դրույքաչափ՝ անկախ ստացվող շահույթի չափերից: Այս առաջարկի տարբեր եղանակների իրականացումն առավել մեծ աշխուժություն է առաջացնում թույլ, հստակ չձևավորված տնտեսությամբ երկրներում՝ հարկային ճկուն քաղաքականությամբ ապահովելով արդյունաբերության ռազմավարական ճյուղերի և հարակից ենթաճյուղերի զարգացման առավելագույնս հնարավոր տեմպեր:

Անպատճառ, առաջնահերթությունների համակարգում պետք է ներառել նոր տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը՝ հաշվի առնելով, որ մեր հանրապետության արտահանման կարողության զարգացումն անհնար է պատկերացնել առանց առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման և երկրի մտավոր, մասնագիտական ներուժի առավել լրիվ օգտագործման:

Ներդրումային բնագավառի նպաստավոր պայմանների ստեղծման ճանապարհին բացառիկ կարևոր նշանակություն ունի երկրում վստահության միջավայրի ձևավորումը: Ճիշտ է, վստահությունը տնտեսական կատեգորիա չէ, սակայն այն ևս կարելի է բնութագրել տնտեսական երևույթներով ու փաստերով: Խորհրդային ժամանակներում Հայաստանի Հանրապետության բնակչության խնայողությունների կորուստը և 1991-1999 թթ. առևտրային բանկերում ժողովրդի ավանդների բացահայտ թալանն իսպառ վերացրին ավանդատուների վստահությունը պետության ու կառավարության և վերջիններիս արտոնագրած բանկային համակարգի նկատմամբ՝ առաջացնելով խոր հիասթափություն և անվստահություն: Դրանով հանրապետությունը զրկվեց ներդրումների սեփական,

հուսալի, անվտանգ ու հզոր այնպիսի աղբյուրից, որպիսին բնակչության խնայողություններն են՝ «բանկային կապիտալի» տեսքով: Պատահական չէ, որ, համաձայն ուսումնասիրությունների, ներկայումս բանկերում բնակչության խնայողությունները մոտ 40 մլն ԱՄՆ դոլար են, մինչդեռ ժողովրդի ձեռքում է գտնվում 600-680 մլն ԱՄՆ դոլար: Այսինքն, բնակչությունը և գործարարները տեղական բանկերին վստահում են ընդամենը 7%-ի չափով¹⁶:

Ներդրումային բնագավառի ակտիվացման ուղղություն ու լրացուցիչ աղբյուր կարող են ծառայել հստակ գործող ապահովագրական ընկերությունների գումարները: Բայց քանի որ 2000 թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետությունում գործող 22 ապահովագրական ընկերությունները հիմնականում միջնորդավորված գործառույթներ են իրականացնում, ապա եկամտի առյուծի բաժինն արտահոսում է երկրից: Պաշտոնական վիճակագրության տվյալներով, հայկական ապահովագրական ընկերությունների կնքված պայմանագրերով 832.099.607,1 հազար դրամ ապահովագրական գումարից արտերկրի ընկերությունների կողմից վերապահովագրվում է 818.292.017,7 հազար դրամը՝ 98,3%-ը¹⁷:

Այսպիսով, ներդրումային բնագավառի ընդհանուր կոնյունկտուրան Հայաստանի Հանրապետությունում դեռևս անբարենպաստ է: Գործնականում ապրանքարտադրողների միջև չկա մրցակցություն, նեղացվում ու կրճատվում են թողարկվող արտադրանքի տեսականին ու անվանացանկը, արհեստական խոչընդոտներ են հարուցվում միջտարածքային փոխանակումների համար, գներն աճում են թռիչքաձև, անկայուն ու հակասական է տնտեսական օրենսդրությունը, ֆինանսական քաղաքականության մեջ գերակշռում է հարկային ուղղվածությունը, անհասանելի են երկարատև վարկերը, խաթարված է հաշվարկների համակարգը: Աննպաստ դեր են կատարում նաև քաղաքական անկայունությունը, հանցագործության աճը, կոռուպցիան ու կաշառակերությունը:

Շատ տնտեսագետներ հանրապետությունում ներդրումային ակտիվության պակասը և նվազման պատճառները համարում են բյուջետային ու հարկային իրական հովանավորությունը և պետության կողմից ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման պաշտպանության բացակայությունը: Դա ճիշտ է, սակայն նման քաղաքականությունը հնարավոր է միայն երկրում կայուն ֆինանսական իրավիճակի ու արժեզրկման բարձր տեմպերը զսպելու պայմաններում: Տնտեսության արմատական առողջացման համար անհրաժեշտ է խիստ ֆինանսական քաղաքականություն, որը ենթադրում է անկենսունակ ձեռնարկությունների փակում, մասնավորեցված այն ձեռնարկությունների հետ վերադարձում, որոնք սահմանված ժամանակում արտադրություն և ծառայություններ չեն կազմակերպում: Ընդ որում, վերջինիս դեպքում ձեռնարկությունից օտարված սարքավորումների և տեխնոլոգիական միջոցների արժեքը պետք է պարտադիր փոխհատուցվի:

¹⁶ Մանասեթյան Թաթուլ, նշվ. աշխ., էջ 49:

¹⁷ Նույն տեղում, էջ 48:

Գնահատելով ներկա տնտեսական իրավիճակը՝ կարելի է պնդել, որ առանց ներդրումների շահագրգռման, տնտեսության հետագա զարգացման հնարավորությունները սպառված են: Այդ պայմաններում ներդրումային բնագավառը չի կարող ոչ միայն տնտեսության վերակառուցման գլխավոր գործոնի դեր խաղալ, այլև ինչ-որ չափով աջակցել տնտեսության կենսունակության մակարդակի պահպանմանը, կասեցնել աճող վատթարացումը:

Հանրապետության տնտեսության գրեթե բոլոր բնագավառներում միջին աշխատավարձի աճի նկատմամբ սպառողական գների հարյուրապատիկ ավելացումը հանգեցրել է բնակչության գնողունակության խիստ իջեցման: Թվում է, թե արտադրողները պետք է հնարավորություններ փնտրեն արտադրանքի գների իջեցման, անվանացանկի նորացման և որակի բարձրացման համար՝ դրանցում գտնելով շահույթի ծավալի մեծացման իրական ուղիներ: Սակայն իրականում դա առայժմ չի կատարվում: Շուկայի թվացող լցվածությունն ու առատությունը ձեռք է բերվել ապրանքների անվանացանկի ու ֆիզիկական ծավալների կրճատման և գների աճի հաշվին:

Պահանջարկի անկումն ապրանքարտադրողներին դրդում է ֆիզիկական ծավալի իջեցումը փոխհատուցել ապրանքների գների բարձրացմամբ: Արտադրության ծավալի կրճատումը հանգեցնում է, պայմանական-կայուն տեսակարար ծախսերի աճին: Այդ ծախսերի բաժինն ընդհանուրի մեջ միջին հաշվով կազմում է 25%-ից ավելին: Արտադրանքի ինքնարժեքի ձևավորման մեջ առավելագույն ծանրությունը չգործող հիմնական ֆոնդերի ամորտիզացիան է, որի բաժինն արդեն անցել է 50%-ից և շարունակում է մեծանալ:

Իրական մրցակցային միջավայրի բացակայությունը թույլ է տալիս ներդրումային նշանակության արտադրանքի իրացման գները սահմանել բացառապես արտադրության անհատական ծախսումների սկզբունքով: Դրա հետևանքով նույնանուն շատ ապրանքների գործարանային գները խիստ տարբերվում են: Այդ բոլորի հետևանքով, ինչպես նաև մշտապես բարձրացվող հարկերի ու տուրքերի ճնշման տակ ներդրումային նշանակության արտադրանքի արժեզրկման գսպանակը ոլորվում է, և դրա գինը ներքին շուկայում ավելի է մոտենում համաշխարհայինին:

Թողարկվող արտադրանքի ինքնարժեքի իջեցումն այժմ չի մտնում ներդրումային նշանակության արտադրանք թողարկողների գործունեության առանցքային ուղղությունների շարքը, և ներկայումս նրանք հակված չեն ներդրումներ կատարել այդ խնդիրների լուծման նպատակով:

Իրավիճակն առավել բարդ ու հակասական է ֆինանսական շուկայում: Միայն վերջին ժամանակներս են կատարվում ֆինանսական շուկայի ձևավորման առաջին քայլերը: Արժույթային գործողությունների ազատականացումից հետո աստիճանաբար ձևավորվում է ներքին արժույթային շուկան: 1998 թվականից ի հայտ եկավ քիչ թե շատ նշանակության միջբանկային վարկերի շուկան, և սկսե-

ցին անցկացվել պետական կարճաժամկետ պարտավորությունների գործառնություններ: Առ այսօր չի ձևավորվել արժեթղթերի մասնավոր (ոչ պետական) շուկան:

Գնահատելով հանրապետության տնտեսության զարգացումն ամբողջապես՝ կարելի է արձանագրել, որ տնտեսության մեջ 1995-1998 թթ. հսկայական տեղատվություններին, անկումային ու ճգնաժամային երևույթներին զուգընթաց, 1998 թ. վերջից Հայաստանում սկսվել է տնտեսության և հասարակական արտադրության հստակ կայունացման և շուկայական հարաբերությունների անցման գործընթաց:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումային բնագավառի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան տնտեսական, քաղաքական և կազմակերպչական բոլոր նախադրյալները՝ ներդրումային իրավիճակի ակտիվացման, առաջին հերթին, ներդրումային նշանակության արտադրանք թողարկող ձեռնարկությունների և արտադրությունների զարգացման համար:

ИНВЕСТИЦИОННАЯ СФЕРА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АТОЯН В. К.

Резюме

В нынешней ситуации общественного производства колоссальная роль принадлежит инвестициям. Для успешной инвестиционной деятельности основополагающим является определение состояния инвестиционной сферы, объема и характера инвестиций на основе конъюнктуры.

Экономика республики в 1990-1997 годах переживала глубокий экономический кризис, во всех областях экономики царил хаос и спад, что было результатом земельной реформы и неграмотной и несправедливой приватизации предприятий, а также системной инфляции.

В 1998 году в республике действовало лишь 7% предприятий, причем они использовали в среднем 30% своих мощностей. Рыночная направленность перестройки экономики республики привела к коренным изменениям структуры источников финансирования инвестиций. Сократилось централизованное и расширилось частное капиталовложение. С 1999 года отмечаются тенденции роста в промышленности, строительстве, транспорте и связи.

„Емкость” инвестиций в нынешней экономике республики не превышает 200-250 млн. долларов США в год.